

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ
Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց
Եսորվարի **ՆՆ-ում Ռուս Եկեղեցու**
իամայնների կառավարչին

ԿԿ արժակարգ իրավիճակների նախարարին

Սկիզբը՝ էջ 2

Եկեղեցականների դասը, հավատավոր ժողովրդի հետ միասնաբար, առ Աստված արդյոք բարձրացրեց՝ Մայր Աթոռ Սրբազանի անասանության, հավերժ պայծառության, ինչպես նաեւ Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի կենաց արեւաշառուի Բ Երեւանի ու խաղաղ հովվապետության համար: Դրանից հետո արվա կապակցությամբ Գերդարյան հոգեւոր ճեմարանի դասիկոն ուտի ունեցավ Ս. Վարդանանց Նվիրված ավանդական դարձած հանդիսությունը, որը կազմակերպվել էր Գերդարյան հոգեւոր ճեմարանի, Երեւանի պետական համալսարանի եւ Պետական

Մայր Աթոռ Սրբազանի Եւրոպական Նշանակալի Ս. Վարդանանց տոնը եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը

դեկտեմբեր 15-ը պատմության է՝ բարձր, եւ՝ դժուար հիշողություններով: - ասաց հայր Գարեգինը: Նա նաեւ շնորհավորեց Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսին՝ իր անվանակոչության օրվա առթիվ՝ ընդգծելով. «Յետանկախության այս 25 տարիներին Նորին Սրբությունն իր ծառայական առաքելության մեջ օրինակ է դարձել ամենքիս այն ճշմարտության, որ քո անձը գտնվելով լավագույն ծեսն այն կորցնելն է ուրիշներին ծառայու-

անկախ կյանքով, որ այս ժողովուրդին իրավունք ունի գոյատևելու, որ իրավունք ունի նայելու դեպի պայծառ ապագան եւ վստահություն ընդ թափելու դեպի այդ ապագան: Նորոյա մեր ազատագրական պայքարը նույնպես դրա վառ ապացույցն է:

Ցավից սրտի, այդ ազատագրական պայքարում ես տալիս եմ զորեւ: Ե՛րբ ռուսաւորությունը, ցավից, գերեւ չէ այդ գոհողություններից: Այսօր էլ մեր սաները բացում են այն անվանակոչված լսարանների դռները եւ մտնում ներս, որոնք կրում են մեր այդ գոհերի, զոհված ուսանողների անունները: Բայց միեւնույն ժամանակ միջանցքներում եւ այդ լսարաններում հայտնաբերվում են մեր Նորոյա հերոսները, որոնք պատվով եւ պատկեւ իրենց զուխը դարձրելու այս վերջին քառօրյա պատերազմում, եւ նրանցից՝ այդ հերոսներից, մի քանիսն այսօր շարունակում են իրենց ուսումը մեր հաստատությունում: Մենք երկյուրած վերաբերմունք ունենք մեր այդ գոհերի հիշատակի հանդէպ եւ հպարտանում ենք մեր այն հերոսներով, որոնք կանգուն մնացին սահմանի վրա եւ չթողեցին ոսկիւն ուսանկիւնը: հայրենի հողը»:

վերաբերմունքի հետ: Վարդանանց խորհրդի կարեւորությունը պայմանավորված է մեր ժողովրդի՝ ազատության նկատմամբ անսահման նվիրման եւ Աստծու հանդէպ հավատարմության արտահայտման իր պայծառ դրսեւորումով:

...Մեր ժողովուրդը Վարդանանց պատերազմին երբեք չի վերաբերվել որպէս անցյալում տեղի ունեցած մի իրադարձության: Վարդանանց ոգին բոլոր ժամանակներում գերիշխող է եղել հայության կյան-

եւ անադարտ՝ հայոց լեզուն: «Ավարայրը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտություն կա պայքարելու մեր սրբազան արժեքների պահպանության համար»,- հավելեց Նորին Սրբությունը՝ հորդորելով նախանձախնդիր ու եղանկուն ջանքեր գործադրել՝ ի փառս հայոց ազգի առաքելության ու ծառայության մեջ հաջողություններ արձանագրելու համար: Վերստին շնորհավորելով ներ-



կառավարման ակադեմիայի ուսանողների համատեղ ջանքերով:

Հանդիսությունն սկսվեց միասնակա՝ Տերուհանկան արդիւնով, կատարվեցին Զ Բ Գերդարյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը:

Բացման խոսք ասաց Գերդարյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը: «Վարդանանց քաջամարտիկ գորավարների եւ զորքերի հիշատակն ամեն տարի համարում եմ իմենքս Ս. Վարդանանց ճեմարանի հարկի ներքո՝ կարեւորելու մերազնայ պատմության հանգրվանային եւ, ինչու չէ, նաեւ շրջադարձային մի իրողություն, որ հավետ փոխեց հայի կյանքը՝ հոմանիշ դարձնելով հայ եւ քրիստոնյա հասկացողությունները:

Ավարայրի հերոսական դեպքերից շուրջ կես դար առաջ հայոց գրի ստեղծումն արդեն իսկ ցույց էր տվել մեր ժողովրդի ցանկությունը՝ քրիստոսի կենարար խոսքին առնելով իր մայրենի լեզվով: Իսկ այս Կարդանանց այդ ազնիվ ցանկությունը վերածեցին անկյուրում կամքի, որ պիտի դարձեր ի վեր ու-

թյուն բերելու մեջ: Թե՛ հայրենիքում, թե՛ սփյուռքում օրեցօր վերընթացող ամեն մի եկեղեցի, ամեն մի դպրոց կամ խնամքի կենտրոն ցուցանում են Վարդանանց վերջինների կամքն ու սրբագործված նվիրումը Յայոց Դոր անձի մեջ»:

Հանդիսության մասնակիցներին ողջունեց նաեւ Ե՛րբ եկեղեցի, պ. գ. դ., պրոֆեսոր Արամ Սիմոնյանը: Շնորհավորելով ամենքին Ս. Վարդանանց պայծառ տոնի առթիվ՝ նա նաեւ իր արտի խոսքն ասաց Նորին Սրբության անվանակոչության կապակցությամբ եւ Յայոց Զովվապետին մաղթեց քաջառողջություն եւ երկար տարիների կյանք իր աստվածահաճոք եւ հայրենակապտակ գործում՝ ի շահ հավատավոր հայ ժողովրդի:

Խոսելով տոնի կարեւորության մասին՝ Ե՛րբ եկեղեցի հավելեց. «Վարդանանց պատերազմում ընկած 1036 քաջորդիներն իրենց զորհուրդով մեկ անգամ ես եկան հաստատելու, որ հայ ժողովրդին իրավունք ունի ապրելու ազատ,

օրվա խորհրդին նվիրված հոգեւոր ու հայրենասիրական երգերով, ասմունքով ելույթ ունեցան Գերդարյան հոգեւոր ճեմարանի, Երեւանի պետական համալսարանի եւ Պետական կառավարման ակադեմիայի ուսանողները:

Ապա բախախոսություն կարդաց Ե՛րբ դասախոս պ. գ. թ. Ալեքստ Ստեփանյանը:

Հանդիսությունը եզրափակվեց Գարեգին Բ Ամենայն Յայոց Կաթողիկոսի օրհնության հայրապետական խոսքով:

Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց գեղեցիկ եւ խորհրդաշարակ այս ավանդույթի հաստատման գործում ներդրում ունեցած բոլոր անձանց եւ ամենամայա հանդիսության կազմակերպիչներին, ապա անդրադարձավ տոնի խորհրդին:

«Սուրբ Վարդանանց խորհրդին ընծայված կարեւորությունն ունի հատուկական խոր արմատներ: Այն ուղղակիորեն կապված է մեր ժողովրդի կողմից ազգային իր ինքնության նկատմամբ դրսեւորած

քում, երբ հատկապես վտանգված են եղել մեր ինքնությունը, մեր հավատքը, մեր հայրենիքը, մեկ խոսքով՝ մեր սրբությունները: Վարդանանց ոգին դրսեւորված տեսանք Սարգսյանայատի ճակատամարտում, Արցախյան պատերազմի տարիներին, ինչպես նաեւ ապրիլյան պատերազմի օրերին:

Հայ մարդը երբեք չի վարանել իր ազատության, իր ինքնության, հավատքի, հայրենիքի, ընտանիքի ու Աստծու համար վճարել սեփական արյամբ: Մահվան տաճակաբերքը խոչընդոտ չի եղել հայոց համար Աստծու նկատմամբ իրենց սերը արտահայտելու ճանապարհին»,- ասաց Յայոց Յայրապետը:

Ամենայն Յայոց Կաթողիկոսը նշեց, որ հայրենիքում եւ սփյուռքում առկա մարտահրավերների ու խնդիրների հաղթահարման գործում անհրաժեշտ են Վարդանանց ոգին, քաջակերությունը՝ միությունն ամրապնդելու, հավատքը զորացնելու, հայրենիքը պաշտպանելու վտանգներից, ամուր եւ հաստատուն պահելու հայ ընտանիքը

կաներին՝ Ամենայն Յայոց Կաթողիկոսը մաղթեց, որ երկնավոր Տերը սր Վարդանանց բարեխոսությամբ խաղաղություն պարգեւի ողջ աշխարհին եւ ամենքին պահպանի իր ամենախնամ Աջի հովանու ներքո:

Կարողությունն ամփոփվեց հայրապետական Պահպանիչ աղոթքով:

Ս. Վարդանանց Նվիրված գերեւույթին ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին միաբաններ, Երուսաղեմի Ս. Հակոբյանց միաբանության անդամ Արիս արք. Շիրվանյանը, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության միաբաններ, պատրիարքական ընդհանուր փոխանորդ Արամ արք. Աթեշյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արք. Բեքչյանը եւ Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Սահակ եպս Մաշալյանը, հայաստանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, տարբեր կրթական հաստատությունների սաներ եւ զինվորականներ:

Փետրվարի 26-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Պարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանի հանձնման հանդիսավոր արարողություն:

Հայրենիքին ու ժողովրդին մատուցած ծառայությունների ու վատական բարձր գնահատանքով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատվով բարձր շքանշան շնորհվեց դիվանագետ, Արաբական Միացյալ Էմիրություններում եւ Կատարի պետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Գեղամ Դարիբջանյանին:

Մեծայայլ կերպարին, վատակին ու գործունեության անդրադարձավ տիար Աշոտ Եսայանը, որից հետո «Էջ Միածին ի Դորե» շարականի երգեցողության ներքո բերվեցին հայրապետական սրբատառ կոնգրակ եւ շքանշանը:

Գ. Դարիբջանյանին ուղղված հայրապետական կոնգրակում, որն ընթերցեց Մայր Աթոռի բարձրագույն հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Գեղորգ եպս Սարգսյանը, գրված է. «...Ուրախ առիթ ունեցեալ անդրադառնալու Ձեր արդյունավոր գործունեությանը: Երկար տարիներ զբաղեցնելով պետական բարձր պաշտոններ՝ Պր. Գ. Դարիբջանյանը եւ բերում մեր երկրի շինության ու պայծառությանը: Տակավին հորինողային տարիներին պատասխանատու հանձնառություններ ստանձնեցիք Սփյուռքահայության հետ կապի կոմիտեում՝ հետեւողա-

Շքանշանի հանձնման արարողություն Մայր Աթոռ Սրբազանի



կան ջանքեր ներդնելով Հայրենիք-Սփյուռք կապերի գորացմանը: Անկախությունից հետո շարունակեցիք անվավ Նախանձախնդրությամբ Ձեր կարողություններն ու հարուստ փորձառությունը ծառայեցնել մեր Հայրենիքի գորացման ու պայծառության

սուրբ գործին: Ձեր հաջողություններն ու ձեռքբերումները բարի արդյունքն են Ձեր աստվածամորն ու հայրենասեր ոգու եւ բարեխիղճ, Նախանձախնդիր աշխատանքի:

Հայրապետիս համար գոհունակություն է հաստատել, որ ճանաչելով Ձեզ՝ մշտապես

զգացել եմ Ձեր ջերմ սերն ու նվիրումը՝ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը»:

Այնուհետեւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը մեծայայլան շնորհեց Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշանը:

Շնորհաբաշխության առիթով վերջինս անդրադարձավ իր ապրումներին՝ խոսելով Մայր Եկեղեցու կողմից գնահատվելու երջանկության, ինչպես նաեւ վերջին տասնամյակներին ժողովրդի կյանքում հոգեւոր կյանքի վերադարձության մասին: Պր. Գ. Դարիբջանյանը նաեւ վստահեցրեց, որ Դարիբջանյան ընտանիքը պիտի շարունակի անբասիր ծառայել Հայոց Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Միջոցառումն ամփոփվեց Ամենայն Յայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով: Անդրադառնալով Գեղամ Դարիբջանյանի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդէպ ունեցած սիրուն եւ նվիրումին՝ Վեհափառ Հայրապետը Տիրոջ օրհնության ու գարակցության հայցով մաղթեց, որ բարին Աստված իր հովանու ներքո միշտ առողջ ու եղանակի պահպանի նրան ու նրա ընտանիքին՝ հաջողություններ պարգեւելով նրանց բարի գործերին ու Նախաձեռնություններին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ


(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

Սկիզբը՝ 2016-ի թիվ 23-24 եւ 2017-ի թիվ 1-3

Տրամաբանական է, երբ գրականագետի խոսքն ընդունում է այսպիսի ուղղվածություն. «...վերածնունդ» եզրն ունի եւ կիրառության իր մասնավոր դեպքերը՝ իբրեւ անվանում ավելի նվազ նշանակությամբ նույննորակ շարժումների» (էջ 7): Այո՛, «նույննորակ շարժումների», բայց ոչ հարմարեցված, իսկ նույննորակը, որ գաղափարագեղագիտական որոշակի հիմք է ենթադրում, կարող է միմիայն հաջողել, բայց ոչ բնավ նախորդել: Իսկ նախորդող դեպքերը, որոնց օրինակներ նշում է գրականագետը, արդեն այլ երեսույթ են, եւ թեթևազամ օգտագործվում է «վերածնունդ» եզրույթը, ապա դա միանգամայն այլ վերածնունդ է, նմանությամբ անգամ՝ ազգային կառուցվածքի այլ արտահայտություն, որն ուղեկցվում է մշակութային վերելքով, ինչը բնորոշելու համար ավելի հարմար է դիպուկ եզրույթ չգտնելու պատճառով անվանում ենք ընդունված եւ սովորական դարձած «վերա-

ծնունդ» բառով: Այդպիսի պայմանական վերածնունդներ համաշխարհային պատմության մեջ տարբեր երկրներում, այդ թվում նաեւ Հայաստանում, դիտարկվել են 8-րդ, 9-րդ, 10-12-րդ եւ հետագա դարերում եւ կոչվել են՝ Մակեդոնյան, Կոմսենյան, Պալեոլոգյան, Կարոլինգյան, Օտտոնյան (տե՛ս 4-9-րդ դարերի միջնադարյան լատինական գրականության հուշարձաններ, Մոսկվա, 1970, էջ 223, ռուսերեն): Նախորդող նշված շարժումները չէին կարող նախապատրաստել եվրոպական Վերածնունդը, իսկ Վերածննդի անդրադարձն անցյալի վրա արդեն միանգամայն այլ բան է: Այս կապակցությամբ գրականագետն ավելացնում է. «Ինչ վերաբերում է հայ միջնադարյան վերածնությանը, ապա եթե իր նկատմամբ, արվեստի ու գրականության բնագավառներում ստեղծած իր արժեքներով այն համեմատելի է եվրոպական մեծ Վերածննդի հետ, ապա իր եական հատկանիշներով ու առաջընթացի միտումներով մերձավոր վիճակի մեջ է նրա հետ:

Հայկական վերածնությունը միջնադարյան վերածնունդից տարբերվում է այն որակը, որն իր ամբողջական արտահայտությունն ստացավ նոր ժամանակների հայ գրականության ու արվեստի մեջ» (էջ 8): Այո՛, համեմատելի է, եւ լրացուցիչ առնչություններ ունեցող ծանոթ սխալը կրկնելու պես մի բան է: Եվ ապա, սա արդեն միջնակալ, գրականությունն արվեստի տեսակ է եւ չպետք է առանձնացնել արվեստի ընդհանուր համակարգից, այսինքն՝ ճիշտ է «արվեստ ու գրականություն» տարածված սխալ արտահայտությունը, որ հանդիպում է հիշյալ մեջբերման մեջ: Եվ քանի որ հայատարայնը ստորագրել է թողնում, ուստի պատահական չեն նաեւ արդեն սովորույթի ուժով կրկնվող այս մտքերը. «...Նարեկացու միջնադարյան ընկալման մեջ, թե՛ն մեղմ ու շատ անգամ անկատար, սակայն, այնուամենայնիվ, ի հայտ է գալիս վերածնունդի ոգին, նաեւ այս վերջինի նպատակը է: Իր մեկնաբանված ու գնահատված է նրա ստեղծագործությունը» (էջ 8): Գրականա-



գետի օգտագործած «...վերածնության ոգին» արտահայտությունը դեռեւս Վերածնունդը չէ եւ բացարձակապես դրանով չէ պայմանավորված նրա ստեղծագործության արժեքը: Հայկական վերածննդի տեսությունը շատերն են կրկնել՝ գրականագետներ, պատմաբաններ, դասագրքերի հեղինակներ, անգամ՝ միմիայն կրկնաբանումների վարժված ժառանգ մեթոդիստներ: Այս շարքում հիշատակենք միայն Գրիգոր Գրիգորյանի «Հայ ժողովրդական բանահյուսություն» (Եր., «Հայաստան», 1980) գիրքը, որ մեզ հետաքրքրող հար-

ցի տեսակետից փաստարկներով եւ գաղափարաբանությամբ նույնն է, ինչ նախորդները: Ամենեւի պատահական չէ, որ եվրոպական գրականության զարգացման ընթացքների քաջատեղյակ այնպիսի մի հսկա գրական-մշակութային գործիչ, ինչպիսին Արշակ Չոպանյանն է, իր «Գրիգոր Նարեկացի» ուսումնասիրության մեջ չի օգտագործում «Վերածնունդ» եզրույթը: Ինչ է, նա այդ դարաշրջանի տեղը չգիտեր (տե՛ս Ա. Չոպանյան, Երկեր, Եր., «Հայաստան», 1966, էջ 271-303):

Շարունակությունը՝ էջ 7

ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 2-3

1926 թ. հունվարին գրված նամակում Թեբեյանը տեղեկացնում է Սյուրմեյանին, որ ինքը՝ որպես նոր կազմված խնամակալության ներկայացուցիչ, պատրաստվում է Կիպրոս մեկնել՝ այնտեղ նոր բացվող Մեյքոնյան որբանոցում աշխատելու: Այդ նամակում Թեբեյանը հույս է հայտնում, որ ինքը հնարավորություն պիտի ստանա գրականությամբ զբաղվելու ու հանդես հրատարակելու. «Եթե սպիկա ըլլայ եւ թե՛ շուտով, ինչպես կը յուսամ, առողջանա, տարի մը հոս կուգաս՝ Հայաստան երթալ՝ առաջ, կը մնաս տարի մը - երկու, հոն հաաքուելից հիկը հարիւր տողը եւ ինծի հետ. անոց ջու հոգիդ կը ներշնչես, եւ յետոյ միասին երթանք Հայաստան՝ հոն մեծ եւ պզտիկ տողը մեջ աշխատելու, անոցմէ առնելու եւ անոց տայո՛ւ համար մեր կապողը: Իր հողին վրայ, ամենուրեք իրեններու միայն հանդիպելով՝ մարդ, կը հաւատամ, թե իր կրցածին վաւագոյն ու մեծագոյնը կուտայ...» (Նամակակն, էջ 292):

Ո՛չ Սյուրմեյանն եւ ո՛չ է Թեբեյանը, որ 1935-ին եւս Հայաստանի իր բարեկամ շրջանակներից (Չապել Եսայանն եւ այլք) հրավերներ ստացավ, միասին Հայաստան գալու հնարավորություն չունեցան ու հայրենի անդադաններում չսկսեցին ո՛չ ծառ եւ ո՛չ էլ «իրենց կրցածը» կարողացան իրականացնել:

Թեբեյանի նամակներում, բանաստեղծություններում եւ անգամ բանաստեղծությունների վերնագրերում օգտագործված «տղա» հասկացությունը, որ Թեբեյանի ընկալմամբ մարմնավորում է ներկայի, հույսը վաղալ, ինչպես նաեւ «Երկրի խորհուրդն, երկնի երազն անսահման...» (տե՛ս Թեբեյանի «Ես կը սիրեմ» բանաստեղծությունը), յուրովի բնութագրի էր նաեւ իրեն՝ Թեբեյանին: Սյուրմեյանին ուղղված մի նամակում եւս գրում է. «... այնչափ աւելի կարճեց իբրեւ մարդ, որչափ իբրեւ տղայ զգալու մեր յատկութիւնը կորսնցուցած չենք ամբողջապես: Բանաստեղծը, ամենէն շատ, տղայ ու տղայ կը մնայ մինչեւ իր ճերմակ մազերուն տակ, տղայ՝՝ նույնիսկ քերթումներ գրելու իր յամամ միամտութեանը մեջ. Տղայ՝՝ ինքզինք պատկերներով եւ ձայնատրոսներով խաբէլու իր սովորութեամբ» (Նամակակն, էջ 260): Հասկանալի է, որ Թեբեյանն այս տոհմում նկատի ունի ստեղծագործողի մեջ երեստարտող ոգու ու անարատության հարստության անհրաժեշտությունը, բայց չմոռանանք, որ այս նամակն ուղղված էր

ՎԱՀԱՆ ԹԵԲԵՅԱՆ - ԵՎՈՒՆ ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.

ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲԱԺՎՆՈՒՄ



հենց Սյուրմեյանին, ում նա համարում էր իր «տղան»՝ «զաւակը»: Թեբեյանի բանաստեղծական աշխարհի տիրապետող թեմաներից մեկը չունեցածի բարձրանքն ու որոնումն է, որի արտերոսումներից են նաեւ նրա՝ հոգեւոր ու մարմնավոր զավակին նվիրված մի քանի քերթածներն ու արտահայտությունները, որոնցից մի մասում, որպես բանաստեղծության «բնորոշ», ըստ երեւոյթին, նկատի է ունեցվել նաեւ հանդիպելիք պատանին, որն իրականություն դարձավ հանձին Սյուրմեյանի:

Թեբեյանը «Հաւակը» վերնագրով երեք բանաստեղծություն ունի գրած:

Առաջին բանաստեղծությունն արձանագրում է ընտանիք, կին ու երեխաներ չունեցող Թեբեյանի մեջ բորբոքվող տենչի, որը հար անբաժան պիտի մնար նրանից. *Ուզեցի անգուսպ քեզ իբրեւ կորույն՝ Իմ փափագներես, ցատուսե ծնած, Որպեսզի գոչեմ սրտես «Հաղթողութիւն», Երբ որ թաղթափին աչքերս քեզն: Բանաստեղծությունը գրվել է 1901-ին եւ լույս տեսավ Թեբեյանի՝ 1914-ին Կ. Պոլսում լույս տեսած «Հրաշալի Յարութիւն» գրքում: Թեբեյանն իր «զաւակին» պատկերացնում է որպես ուժի եւ շնորհիւնի կրող անձ, ով սեզ է ու սիրով ամենքից, բայց մանավանդ մեկը, ում միջոցով պիտի ճանաչեն նաեւ իրեն.*

Եվ մեծնա հասակդ ամբոխին վերեւ, Եվ երգես անուրը միաբերան, Ու ճանկանս գիւ վրադ, որդիս անմահ...:

Սա հենց այն հոգեվիճակն է, որ արդեն պատրաստի հող էր ստեղծում հոգեզավակ մեկին ունենալու համար: Երիտասարդ Սյուրմեյանին ոգեւորել ու օգնել են ոչ միայն Թեբեյանի գրած նամակները, այլեւ Թեբեյանի գրած հին ու նոր բանաստեղծությունները: Վահան Թեբեյանի մասին գրած իր անվերեւ հոգվածում (տե՛ս «Սովետական գրականություն», Եր., 1980, թիվ 6) Սյուրմեյանը վկայում է, որ իր հետ ձերբակալ է տարել Թեբեյանի «Հրաշալի Յարութիւն» եւ «Կես գիշերն մինչեւ արշալոյս» գրքերը, որոնք մականագրված էին Թեբեյանի կողմից: Վ. Թեբեյանին ուղղված 2-ը նոյեմբերի 1922 թվակիր նամակում, խոսելով Ամերիկայում իր ծանր կացության մասին, Սյուրմեյանը գրում է. «Նուշատեորիս մեջ արձանագրած եմ տված գրքերդ կտորներ ու արդթագրքի մը նման հետս կպտտեցնեմ զայն: Երբ տրտում եմ կամ ձախողության մը համար քիչ մը հուսահատիմ, անմիջապես կբանա՛մ հուշատետրս ու կկարդամ, անկուշտ կկարդամ, մինչեւ որ հոգիս բացվի: Մանավանդ երկու «Հավակն»-ները ինծի այնքա՛ն ուժ կուտան. այնքա՛ն, այնքա՛ն խանրավառություն...» (նույն տոհմ, էջ 101, ընդգծումը - Ա. Ա.):

Երկրորդ բանաստեղծությունը, որ Թեբեյանը գեղեղեց 1919-ին Փարիզում լույս տեսած իր «Կես գիշերն մինչեւ արշալոյս» գրքում, գրել է 1914-ին, երբ ինքը 36 տարեկան էր եւ իրեն, ինչպես այդ բանաստեղծությունում է բնութագրում, արդեն համարում էր «գիւս իմ մեջ» չարաչար սպանված: Բանաստեղծությունն արտահայտում է Թեբեյանին այնքան հատկանշական գալիքի մեջ շարունակվելու բաղձանք՝ իրեն նեցուկ զավակի միջոցով.

Երբ ես ճորդի՛մ ան բարձրանա՛ր թո՛վս ի վեր, Իմ սպասում կենքիս հիւթովն առըցուկ. Ես հովանիս կտամ, եւ ան ինձ նեցուկ, Ու նոր արեւ՝ աչքին մեջ ալքըս գոցուել... Բանաստեղծության գրության տարին՝ 1914, արդեն ատում է, որ այս քերթվածը կապ չունի Սյուրմեյանի հետ: Բայց այն փաստում է հոգեկան հենց այն պարագը,

զգայական այն բաղձանքը, որը 20-ական թվականների սկզբին լցվել է Սյուրմեյանի անձով՝ բառ առ բառ արձանագրելով հոր ու զավակի այն ցանկալի փոխարարությունը, որ ծնվելու էր նրանց միջեւ՝ «Ես հովանի անոր, եւ ան ինձ նեցուկ»:

Երրորդ բանաստեղծությունը Թեբեյանը գրել է 1926 թ., ստույգ ամիսը հայտնի չէ: Սակայն դատելով բանաստեղծության չորրորդ տնից՝ այն ուղղակիորեն առնչվում է Թեբեյանի կյանքից Սյուրմեյանի «խապա» մեկնած լինելուն, հավանալի է՝ բանաստեղծական ուրույն ընդհանրացմամբ: Այդ «մեկնած լինելը» կարելի է նաեւ ընկալել որպես բանաստեղծի մեջ զավակի նկատմամբ տածված զգացումի ու տենչի մարում-սպառում: Ստույգ է, որ այստեղ գործել է թե՛ կոնկրետ անանվորումը եւ թե՛ բանաստեղծական ընդհանրացումը:

Թե՛ բանաստեղծության առաջին տունն արձանագրում է զարմանք զավակի նկատմամբ ունեցած այդքան մեծ սիրո, իսկ երրորդ տունը հաստատում, որ այդ սերն ավելի հոր էր, քան ուրիշների եւ անգամ ծնողների նկատմամբ տածված սերը, ապա երրորդ տունն արդեն իրական հոգի ու մարմին առած զավակի հաստատումն է, որը սակայն այլեւս անցյալ է.

Ա՛հ, իմ տղա՛ն որ կապրեր առես մը այնքան ինձ մտոյի, Հիմա մեկներ է իսպառ, ու ամպերուն մեջ երբեմն,

Անցող ճերմակ ամպերուն, ես գիշերդ դեռ կտունեմ...

Մի կողմ թողնելով այս բանաստեղծության մեջ առկա ուղղակի ակնարկումները՝ ասենք, որ եթե առաջին երկու բանաստեղծություններն այս կամ այն չափով բացահայտում էին Թեբեյանի հոգեկան տվյալանքները եւ արտահայտում բանաստեղծի մեջ ծնված հայրական ու ծնողական ցանկությունները, ապա երրորդ բանաստեղծությունը զանցումն է այդ ամենի, զանցումը դեռեւս մանկությունից եկող այն սիրո, որ, բանաստեղծի խոսքերով ասած, «ինձմե դեպի ինձ կընէր շրջան մը անծայր»:

Շարունակելի
Սրբոյն ՍՎԱԳՅԱՆ
Բանասիրական գիւ. որպէս, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 5
Այսպիսով՝ այս կամ այն չափով հայկական վերածնունդի կողմնակիցներ են Մանդ, Արեւիյանը, Զ. Օրբելին, Արոսը, Թորանյանը, Մանասյանը, Մկրտչյանը, Զալոյանը, Թամրազյանը, Դավթյանը, Խաչատրյանը, որոնց բոլորի փաստարկներն էլ, ըստ Էրեւանի, նույնն են։ Սակայն այդ վերածնունդը եւ լեզուական վերածնունդը տարբեր են։

Հայագիտության մեջ Մխիթարյանների գործունեությունը, ցավալիորեն, միշտ էլ, որ հիշատակվում ու գնահատվում է ըստ ամենայնի։ Մխիթար Սեբաստացին (1676-1749) միաբանությունն ստեղծել է 1701 թ. սեպտեմբերի 8-ին Կոստանդնուպոլսում։ Այնուհետեւ տեղափոխվել է Զոնաստանի Պելոպոնես թերակղզի։ Հոռոմ միաբանության կանոնադրությունը հաստատել է 1712-ին։ 1717-ին միաբանությունը վերջնական հանգրվանել է Ս. Ղազար կղզում, որը պատկանում էր Վենետիկի Հանրապետությանը։ Ինքը՝ Մխիթարը, սկզբում առաքելական էր, որ ցանկանում էր գործունեությունը ծավալել Հայաստանում։ Էջմիածնում, Կարինում, Սեւանում, բայց որոնումները նրան դարձրեցին Կաթողիկե եկեղեցու արքայ, միաբանության հիմնադիր։ Նրա եւ համախոհների գերազանց նպատակն ազգին ծառայելու առաքելությունն էր՝ կործանարար ժամանակների մեջ հայոց գիրն ու հայոց լեզուն փրկելու անխրճեշտությունը։ Ազգին ծառայելու, ազգային գիտակցությունն արթնցնելու բուն ցանկությունները դարձան հայագիտական ծրագրեր, որոնք կյանքի կոչվեցին գիտական, գեղարվեստական, թարգմանական իրագործումներով, տպագրական գործով, որակյալ հրատարակություններով։ Միաբանությունը դարձավ աշխարհի եւ արժանացավ Նապոլեոնի բարեխաճությունը. հավասար կարգավիճակով միաբանությունների՝ շարունակելու գործունեությունը։ Նապոլեոնի 1810 թ. սեպտեմբերի 8-ի հրամանով միաբանությունը ճանաչվել է անձեռնմխելի, նրա մեկ այլ հրամանով՝ Փարիզում բացվել է հայոց լեզվի ուսուցման բաժանմունք՝ 26 ուսանողով։ Սա արդեն հայագիտության դարձնող էր նաեւ օտարների համար՝ Ֆ. Նոյսման, Զ. Պետերսենի, Վ. Լանգլադի, Զ. Զյուրմանի, Ս. Ման, Ա. Մեյե... Մխիթարյանները հայեցի դաստիարակությանը վարժարաններ ստեղծեցին տարբեր մայրցամաքներում ու երկրներում՝ Պարս-

ՆԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

կաստան, Զունգարիա, Ռուսաստան (Ղրիմ), Լիբանան, Սիրիա, Ֆրանսիա, Իտալիա (Նաե Տրիեստ), Թուրքիա (Պոլիս, Զմյուռնիա, Պարտիզակ, Մուշ, Տրապիզոն, Կարին), Ամերիկա, Արգենտինա։ Նրանք շատ լավ գիտեին գրի ու գրքի աշխարհակալ ուժը։ Եվ գիտեին ինչ է հայրենիքը, հայրենի հողը, ուստի ամեն կերպ ջանում էին պահպանել կապը մայր հայրենիքի հետ։ Նրանց հայրենասպաշտ ոգին էր, որ մարմնավորվեց բազմաթիվ գրողների երկերում, միաբանության անդամներից մինչև Պեշկապաշյան ու Վարուժան։


Հրատարակվում են Մխիթարյանների, նաեւ ժամանակի առաջադիմությունն ապահովող այլ հայ կաթողիկե հոգևոր գործիչների աշխատությունները։ Հիշատակենք մի քանիսը, որոնք նպաստեցին ազգային վերածնունդին։ Մխիթար Սեբաստացի՝ «Դուռն քերականության աշխարհաբար լեզուի հայոց» (1727), «Քերականության գրաբար լեզուի հայկազան սեռի» (1730), «Բառգիրք հայկազան լեզուի» (հ. Բ, 1749, հ. Բ, 1769)։ Նա հայոց խոսքն ու լեզուն մաքրեց ամեն տեսակի լատինական ազդեցություններից ու զավառաբանություններից։ Ծարուսակեց։ Մ. Զամյան՝ «Դատմություն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցամ տեան 1784», (հի. 1-3, 1784-1786), Խ. Էրզրումցի՝ «Համառոտական իմաստաբանություն» (1711), Մ. Ավետիսյան՝ «Լիակատար վարք եւ վկայաբանություն սրբոց» (հի. 1-12, 1810-1815), Ղ. Ինճիճյան՝ «Դարապատում» (հի. 1-8, 1824-1828), Ս. Ազնոց եւ Ղ. Ինճիճյան՝ «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» (հի. 1-11, 1802-1808), Ս. Ազնոց՝ «Ճարտասանություն» (1825), Գ. Ավետիսյան, Խ. Սյուրմեյան, Մ. Ավետիսյան՝ «Նոր բառգիրք հայկազան լեզուի» (հի. 1-2, 1836-1837), Է. Զյուլմուլլան՝ «Առձեռն բանաստեղծություն» (1839), «Առձեռն ճարտասանություն» (1839), Գ. Զարբանյանյան՝ «Դատմություն հայերեն դպրութեան» (հի. 1-2, 1865-1878)։ Ավետիսյան Դ. Մինասյանի, Ա. Բազրատունու պատմական ողբերգությունները, Զ. Վանանդեղու առաջադեմ ծին պոեմները, «Բազմավեպ» ամսագիր

հրատարակությունը 1843-ից։ Նույն գործունեությունը միաբանության պառակտումից (1773) հետո շարունակում են նաեւ Վինենայի Մխիթարյանները. Զ. Գաթըրճյան՝ «Տիեզերական պատմություն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս» (հի. 1-2, 1849-1852), Պ. Զովսեյան՝ «Մարդկային լեզուի սկզբան» (1857), Ա. Այտընյան՝ «Քննական քերականության աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի» (1866), Նաե՝ «Եվրոպա» (1847-1863) շաբաթաթերթը, «Հանդես ամսօրեայ» (1887-1980) ամսագիրը։

Բացառիկ կարեւորություն են ստանում «Մատենագիրք խախնեաց», նույնի համառոտ «Ընտիր մատենագիրք», նաեւ «Ազգային մատենադարան» մատենաշարերը։

Թարգմանվում են. Զոմերոս՝ «Իլիական» (1843), «Ոդիսական» (1848), Վերգիլիոս՝ «Ենեական» (1845), «Մշակական» (1847), Զորացիոս՝ «Արվեստ քերթության», նաեւ Կորնելի, Ռասինի, Վոլտերի երկերը։ Ավետիսյանի ու Նուրի թարգմանությամբ լույս է տեսնում Տոբիթատ Տաստիի «Ազատագրում» Երուսաղեմի վիպերգը։ Նրանք թարգմանող ներգործությամբ թարգմանական գրքեր են լույս տեսնում նաեւ Նոր Նախիջեւանում, Ֆենելոն՝ «Տելեմաքի արկածները» (1774), Մադրասում. Վոլտեր՝ «Մահ Յուլիոսի Կեսարու» (1818), Մոսկվայում. Ռասին՝ «Գոթադիա» (1834)։

Մխիթարյանների գործունեությունը Թամրազյան գնահատում է որպես «անցյալի վերականգնանք»։ Այնուհետեւ. «Նրանք դարերի փոշիների միջից հանեցին, խմբագրեցին, ծանոթագրեցին եւ ընթերցողի առջեւ դրեցին հայ ողջ դպրությունը, պատմագրությունը, մասամբ էլ պոեզիան։ Դա վիրիարի լիցք տվեց ժամանակակիցներին, ստացավ ժամանակակից շեշտ, ջերմացրեց հայ մարդկանց, բորբոքեց անկելն ու անգլուխ սերնդին»։ Ծարունակության մեջ՝ «Ուրեմն ինչ-որ բան վերածնվում էր...» (Հայ ընտադատություն, գիրք 9, եր., «Նախի», 1992, էջ 15, 23)։ Իր հերթին Զալանթարյանն այսպիսի գնահատական է տալիս. «Նրանք իրենց գործունեությունն սկսեցին՝ վերականգնելով մո-



ռացված ավանդները եւ հասցրին մինչեւ այնտեղ (իրենց էլ շարունակելով), ուր գործում են նոր ժամանակի եվրոպական գրականության սկզբունքները։ Հատկապես 18-րդ դարը եւ 19-րդ դարի առաջին կեսն առանց Մխիթարյանների ամայի կմախք ինչպես հոգեւոր, այնպես էլ մասնավորապես գրական մտքի զարգացման իմաստով» (նշված աշխատությունը, էջ 158)։

Կան նաեւ այլ գնահատություններ։ Մխիթարյանների գործունեության իրական գնահատությունն ավելին է։ Նախա-մաշտոցյան հայոց դպրության հարցն առայժմ թողնենք մի կողմ։ Ինքը՝ Մաշտոցը, համաշխարհային նշանակությամբ ժամանակի տարածաշրջանային մեծագույն գործիչներից մեկն էր, որ ծնեց, ստեղծեց, ընթացք տվեց մեր Նոր, իր անունով կոչվող Մաշտոցյան քաղաքակրթությանը։ Սա մեր ժողովուրդի դարաշրջանն է, որին ասում ենք նաեւ Ոսկեդար։

Մեր երկրորդ ծնունդը՝ արդեն իսկ վերածնունդը, պայմանավորված է Մխիթար Սեբաստացու գործունեությամբ, ով Նոր թափի հարդորեց ազգային ինքնագիտակցության եւ վերականգնեց մեր ինքնության նախահիմքերը։ Այդ իսկ պատճառով նրա եւ նրա կազմակերպական բուն գործունեությամբ է պայմանավորված հայոց իրական վերածնունդը։

ՊԱՅԿԻՍ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Սկիզբը՝ էջ 6
Հովի. Գրիգորյանի կենսագրությունից մեզ հայտնի է, որ նա ծնվել է 1945 թ.՝ տուփի եւ աղքատության տարիներին։ Նրա մայրը որդու հետ լույս աշխարհ է բերել նաեւ մի աղջիկ, ով մահացել է ծննդաբերությունից հետո։ Կենսագրական այս փաստը հեղինակի գրչի տակ դարձել է բանաստեղծություն՝ ցույց տալով միաժամանակ զավակ ունեցած եւ զավակ կորցրած մոլորված ընտանիքի հոգեվիճակը, քրոջ եւ եղբոր միջեւ եղած անխաղճի կապը, քրոջ կորցրած եղբոր ափսոսանքը։

*Ծնվել եմ առավոտ շուտ,
լեկնակալայն մի աղքատիկ առավոտ։
Ինձ հետ ծնված ընտանիքս մահացել է
մի քանի ժամ հետո,
երբ օգոստոսի արեւը վարդոց արդեն
դուրս էր եկել
եւ անտաքեր նայում էր մեր մոլորված
ընտանիքին,
որը մեկ ժպտում էր եւ մեկ էլ լայիս էր
սրտակեղեց։*

Հովհաննես Գրիգորյան, Հրեշտակներ մանկության երկնքից, եր., 1992, էջ 123

Բանաստեղծի կյանքի առաջին առավոտը, առաջին արեւը, Նոր կյանքի խորհուրդ ունենալով, իրենց հետ միաժամանակ բերել են եւ ծնունդ, եւ մահ։ Գուցե սա է նաեւ պատճառը, որ «Այս գիշեր եւ վաղը ցերեկ» բանաստեղծությամբ հեղինակը հաստատում է ուրախության եւ դժբախտության միախառնված լինելը՝ գրելով, որ երջանակությունից միշտ էլ դժբախտության հոտ է գալիս։ Այսինքն՝ բանաստեղծի կյանքի սկիզբն արդեն իսկ ցավոտ է եղել, ցավը ծնվել է նրա հետ եւ ուղեկցել նրան ամբողջ կյանքի ընթացքում։ Բարագայում՝ ողջ գի-

ՄԵԳՈՎԱԿԱՅՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՊԱՏԿՆԵՐԸ Հովհաննես Գրիգորյանի «ԻՐԵՆՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԵՒՅ» ԵՐԱՐՈՒՄ



տակցական կյանքում, բանաստեղծը միշտ հիշել է քրոջ եւ իր կյանքի լավագույն շրջանը համարել մոր արգասնում նրա հետ միասին ապրած ինն միսները։ Ընտանիքի մյուս անդամների կողմից վաղուց մոռացված ընտանիքի հաճախ է ստիպել նրան արթնանալ սրտից ցավից՝ թաց աչքերով։

Կյանքի անցողիկության փիլիսոփայությունն իր յուրատիպ մեկնաբանությունն է գտել Գրիգորյանական պոեզիայում։ «Մարդու կյանքի շարժումը նա (Հովի. Գրիգորյանը - Մ. Ղ.) ենթարկում է որոշակի պարբերացման՝ առավոտ, ցերեկ, իրիկուն եւ գիշեր (կամ՝ գարուն, ա-

մառ, աշուն, ձմեռ), որը, բացի կոնկրետ օրվա կամ տարվա եղանակների մասնավոր պարբերացումից, ունի առավել լայն՝ մանկություն, հասունություն, ծերություն, փիլիսոփայական որոշակի բեկ կողմ շերտը» (Պետրոս Դեմիրճյան, Նշված հոդվածը, էջ 129)։ Գեղարվեստական մի հնարանը՝ կյանքի առավոտներից մեկի նկարագրությամբ, հեղինակը բացում է քնարական հերոսի, ինչպես նաեւ մարդ-եակի աննկատ անցնող եւ կարծես մի անկթաթուր ծերացնող տարիները, ողջ կյանքի պատկերը՝ ի ցույց դնելով այն օրորոցում պայման «դեռ ոչ մի տարեկան» մանկան, հետո շրիկնողով փակվող ու բացվող դռների, ընդերքի՝ դպրոց գնալու պատկերներով։

*Եվ դեռ աչքերդ փակ սթափվում ես
քիչ-քիչ,
քո լացի ձայնը, որն ականջիդ մեջ է...
քո լացի ձայնը... աղջիկդ է լայիս...
օրորոցի մեջ
կնոջ քայլերը... ինչ-որ դռներ են
փակվում ու բացվում
խոհանոցից ներս... Եվ սթափվում ես
վերջնականապես,
հետո ծերանում
մի ակնթարթում...
էջ 124*

**Ծարուսակելի
Մարիե ՂԱԶԱՐՅԱՆ**

ԳԵՂԱՐԿԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ «ՄԵՐԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷԶԵՐՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

Չմոռանալ, որ սա ասվում էր բալկա-
նյան պատերազմի նախաշեմին, եւ այս
պատկեր-պատմվածքը պետք է դիտել հա-
յությանն ուղղված պայքարի կոչ: Ճիշտ է
նկատել Կ. Դանիելյանը, որ Արծրունին
նոր թեմատիկա է առաջարկում գաղա-
փարակիր գրչակիցներին. «Արծրունու ե-
լույթը (նշված պատմվածքը - Ա. Գ.) ծրագ-
րային էր, գեղարվեստական ձեւը՝ մի-
տումնավոր: Սոցիալական հարցերով
զբաղված գրականությանը Արծրունին ա-
ռաջարկում էր նոր թեմատիկա - արեւմ-
տահայ դատի պաշտպանություն» (**Դ. Դա-
նիելյան**, Գրական մշակներ, Եր., 1977, էջ
44): Սրանով սկիզբ է դրվում «Մշակի» էջե-
րում «Նոր կյանքի» (արեւմտահայության)
պատկերմանը: Այս համատեքստում
Բաֆֆու «Ջալալեդդին» վեպը դառնում է
ամենամեծ ջանակիրը՝ իր ետեւից տանե-
լով «Մշակի» նովելիստներին: Առաջին
արձագանքողը դառնում է Գ. Պապյանը,
որը հաջորդաբար տպագրում է «Ըմբիշ
վանեցին» եւ «Մատուկ մուշեցին» պատմ-
վածքները, որոնք առանց սխալվելու կա-
րելի է համարել Արծրունու պատմվածքի
«գաղափարական հետեւորդները»: Ավե-
լացնենք, որ բացի թվարկված հայ գրող-
ներից՝ «Մշակում» տարբեր տարիների
տպագրվեցին նաեւ Պողոսյան (Պաղիա-
վունի), Շիրվանզադե, Ղ. Աղայանը, Վ.
Փափազյանը, Ա. Արփիարյանը: Առաջին
երեքը շատ շուտ հեռացան «Մշակից»՝
հենց Արծրունու վարած բաղադրականու-
թյան պատճառով, իսկ բոլոր այն գրողնե-
րը, ովքեր չէին համագործակցում «Մշա-
կի» հետ, կամ ենթարկվում էին անողոր
քննադատության, կամ, լավագույն դեպ-
քում, չէին հիշատակվում լրագրի էջերում:

Չենց սա նկատի ունենալով է, որ Թու-
մանյանն անհատական գնահատականնե-


րում իրավացիորեն տեսնում է խիստ
կանխակալ վերաբերմունք. «Թեեւ Արծ-
րունին օժտված էր եվրոպական լուսավոր
գաղափարներով, բայց եւ այնպէս հայ
գրականության վերաբերմամբ շատ տա-
րփոխակ դիրք բռնեց: Այն բոլոր գրողնե-
րին, որոնք չէին մասնակցում «Մշակին»,
չուզեց ճանաչել, եւ դրա արդյունքն այն ե-
ղավ, որ Գ. Պապյանի եւ Յ. Տեր-Գրիգորյա-
նի նման գրողներն արժանացան «Մշա-
կի» էջերում վիպասանի անվան, իսկ իրոք
հայտնի գրողները մոռացության տրվեցին
«Մշակի» կողմից, թեւէ նրանք ներկայումս
մեր գրականության մեջ պատվավոր տեղ
ունեն գրաված» (**Նվարդ Թումանյան**, Թու-
մանյանը քննադատ, Եր., 1939, էջ 116):

Դա իսկապէս այդպէս էր, եւ պատահա-
կան չէ, որ գրեթէ նույնանման տեսակէտ է
հայտնում նաեւ «Մշակի» երթմնի աշխա-
տակից Շիրվանզադեն. «Առհասարակ
Արծրունին այն հավակնությունն ուներ,
թէ «Մշակից» դուրս հայ գրականության
չկա եւ չի կարող լինել» (**Ա. Շիրվանզադե**,
Կյանքի բովից. Հուշեր, Եր., 1982, էջ 141):

«Մշակի» էջերում տարբեր տարիների
բազմաթիվ գրախոսականներ ու արձա-
գանքներ տրվեցին Գ. Սունդուկյանի գոր-
ծերին, Սենեքերիմ Արծրունու, Ալեքսանդր
Քիչմիշյանի, Շիրվանզադեի, Ս. Տյուսա-
բի տարբեր ստեղծագործություններին,
ինչպէս նաեւ ժամանակին բեմադրվող
հայ ու օտար հեղինակների թարգմանա-
կան դրամաներին:

1886-ի վերջին Արծրունին «Հայոց վի-
պական գրվածքներ» վերնագրված առաջ-
նորոգում քննության է առնում Ս. Տյուսա-
բի «Արաքսիա» վեպը: Ցավոք, ճիշտ գնա-
հատումների կողքին Արծրունին կրկին
հարկ է համարում անդրադառնալ ռուսնե-
տիկական դպրոցի ավանդներին եւ նորից
տալիս է ոչ ճիշտ մեկնաբանություններ:

Այս անգամ էլ Արծրունին կրկին ռուսնե-
տիկ գրողներին մեղադրում է շինծու տի-
պեր ստեղծելու եւ միայն երեւակայակա-
նին ուշադրություն դարձնելու մեջ: Ռու-
մանտիկ գրողներից Արծրունին «պայծառ
բացառություն» է համարում Բալզակի վե-
պերը եւ ռուսնտիկ հեղինակների վերը
հիշատակված մեղադրանքները վերագ-
րելուց հետո անցում է կատարում հայ վի-
պասանությանը՝ այն ամբողջովին կապե-
լով ֆրանսիական ռոմանտիկական դպրո-
ցի ազդեցության հետ: Սակայն տարօրի-
նակն այն է, որ Արծրունին այնուհետ ժյու-
տում է ողջ հայ վիպագրությունը՝ հեղի-
նակների մեղադրելով ընդամենը մակե-
րեսային քննության կատարելու մեջ. «Հայ
վիպագրողը չգիտէ դիտել եւ ուսումնասի-
րել իրականությունը, ընդունակ չէ մար-
դուս սրտի արտահայտությունները ճիշտ
եւ նուրբ հոգեբանական քննության են-
թարկելու: Հայոց ռոմանները, կատարե-
լապէս զուրկ լինելով հոգեբանական
ճիշտ քննության որեւէ նշույլից, հիմնվում
են կամ միմիայն արտաքին կյանքի նկա-
րագրական կողմի վրա, կամ՝ ազգասիրա-
կան տենետեցիայի վրա, կամ՝ սարսափ
ազդող անբնական, շինծու երեւոյթների
վրա» (1886, հ. 146): Տյուսաբին համարե-
լով մեր գրականության մեջ «ամենալավ
վիպագրողներից միսը» Արծրունին չի ու-
զում անգամ մտածել մյուս գրողների մա-
սին: Վերջնական գնահատականը եւս ժյու-
տողական է, բանի որ, նրա համոզմամբ,
դեռեւս ոչ մի հայ գրող չի կարողացել հաս-
նել իրականության ճշմարտացի, նուրբ ու
խոր քննության անցկացնելու աստիճա-
նին, եւ պատճառն այն է, որ հայ գրողներն
ապրում են «երեւակայական աշխար-
հում», որին հատու չեն իրական կյանքի
զաղտնիքները: Իսկ «Արաքսիա» վեպի
թերությունը (բացի, իհարկէ, ռոմանտի-



Հովհաննէս
Թումանյան

կական վեպին բնորոշ ավանդական թե-
րություններից) նաեւ այն է, որ տիպերն
ուղղակի արհեստականորեն, գոյով հար-
մարեցրել է «ռոմանի չափից դուրս խճե-
ված ֆարսուկայի մեջ»: Ի դեպ, նմանատիպ
մեղադրանք հնչեցնելու փորձ Արծրունին
արդեն ուներ: Դեռեւս դրանից չորս տարի
առաջ՝ 1882-ին, Սենեքերիմ Արծրունու
«Տփխիսեցի Ասպետյաններ» դրամայի
անշնչությամբ Արծրունին, հանդես գալով
ծավալուն գրախոսությամբ, այն միտքն է
հայտնում, որ այդ դրամայում ոչ թէ որո-
շակի երեւոյթներն ու իրողություններն են
ծնում հետեւանք, այլ հեղինակը, նպատա-
կը աչքի առաջ ունենալով, հարմարեցրել է
փաստերը: Ամբողջության մեջ Արծրունին
իրավացի էր, ճիշտ էր նաեւ հիշատակված
Եղաիսանցումներում, պարզապէս նա
դրանից առաջ անտեղի ու անհարկ մե-
ղոդներ է առաջ քաշում, որի համար էլ եր-
գիծաբան է «Պարոնյանից անմիջապէս
ստանում է «**ինդուստիկ** խմբագիր **դեռու-
տիկ** Մշակի» (Գ. Պարոնյան, Հայ դասա-
կաների գրադարան, Երկեր, Եր., 1979, էջ
124) գնահատականը:

Շարունակելի

Աղջուկս ԳՆԱՏՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ



Սկիզբը՝ էջ 6

Շնչեղված ու անմխիթար սրտի ողբ է բա-
նաստեղծի ԺԳ քերականը՝ «Յարազս ան-
գիտաց տուտ խօսելոյ զբանս, անպիտան
է հակառակ կալ իմաստնոց»: Կոտան-
դինը խիստ հուզված է «անգեղ եւ «ան-
միտ» մարդկանցից, այնպէս էր նա տանջ-
վում է, վարդնում իր հանգստությունը եւ
բողոքի ու հառաչի ճիչեր է արձակում
բարկ խոսքերով եւ ուժեղ շեշտով.

Ֆորիաթ կանչեմ հազար

**Ն ահեղ հառաջ բերեմ լալով,
Ի յանգետ մարդկան ձեռաց
գիղգիս երեմ անշէշ հըրով.
Եմ իմար դարձել ու խեւ
ու սաղայի՜ ի շուրջ գալով,
Եւ վաքն էշ ու անյիմայ
նոսնց՝ հանեմ գիղգիս շուտով:**

Նա խիստ խարազանում է իրեն հալա-
ծողներին, որոնք անհոգի կեղտակներն են,
չգիտեն մի պիտանի եւ խելոյ խոսք ասել,
ատելով ու մատնելով իմաստուն մարդուն:
Բանաստեղծն է՛լ ավելի մեծ ողբերգու-
թյուն է ապրում՝ տեսնելով նրանց ոչ միայն
չարությունը, այլեւ անասինման տգիտու-
թյունը: Խաղաղամիտ ու հետադեմ մտա-
ծողները, լավի, բարու, ազնիվի ու իմաս-
տունի գաղափարը կորցրած, նենգում են,
ստում եւ կեղծավորում, ծանր բեռ են
դնում ուրիշների վրա, հիմար լինելով՝ խե-
ղք են ձեւանում եւ տգիտությամբ խոցում
ոչ միայն իրական, այլեւ առողջ սիրտը.

ԿՈՍՏԱՆԻՆ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԵՆԱՐԿԸ

Կեց մ'են բոխչկ եղել,
թե՛ Ղեղ ունիմ խիստ օգտակար,
հոցեն գառողն ի սիրտն
ու **հիւընդին** են մահարար:
Կամ՝

Իրենց բեռն թեթեւ՝
ծանոցը կամիս այլոց համար,
Ու երեխն գիտուն
եւ **իմաստուն**, եր են իմար:
Այս մարդկանց Երզնկացիի համարում է

հոգավ ու մտքով կույր, որ իրենց մարմինը
գեղեցկորեն գաղթարել, իմաստության
բողեղ հագել ու իմաստուն են երեւում,
բայց տգետ են, չար ու հիմար են չեն կա-
րող մտքով հասկանալ կյանքի գաղտնիք-
ները, չգիտեն դրա արժեքը: Նրանք արդա-
րին ու իմաստունին հիմար են կոչում,
անձնագիտին, որ կյանքի գնով մարդկու-
թյանը իմաստություն, գանձ ու գոհար է
պարգեւում, արհամարհում են ու նրա գո-
հարը հաշվում անպիտան ջար:

Հիմար լինելով՝ նրանք ատում են իմաս-
տուններին, ծուռ համարում նրանց բռնած
ուղին, ծածկում լավ գործերը ու ամբաս-
տանում, վատահամբավ են հռչակում.

Ատեն ըզմարդն իմաստուն,

իմար կոչեն ու ծուռ ճամփով,

Ծածկել են ըզգործն աղէկ ու

վատ անուն հանեն շուտով:

Երզնկացիին տակար է համարում նրանց
միտքը, անկարող տանելու իմաստությու-
նը՝ նման հիվանդի, որին ամենաբաղա-
բան էլ լեղի է թվում, կամ կույրի, որի առ-
ջեւ հազար ջան է վառած: Այդպիսիներին
նա հավասարեցնում է անբան անասունի,
որոնց առջեւ եթէ մարգարիտ էլ լցնես, ի-
րենց կերն են ուզում միայն.

Թե՛ լընուս դու մարգարիտ

յառջեւ իշու կամ խոզի,

Նա համարի գամենն ոչինչ,

թե՛ բեր ինձ յերդ ու գաբի:

Թե՛ հիւընդին տաս կերակուր
բազոց ու անուշ նման շաքրի,
Նա մաղծով սիրտն է ի լի,
նորա թուրի գահի ու լեղի.
Թե՛ վառես ջաղաց հազար
ու մոմեղենս առջեւ կուրի.
Նորա թուրի ամենն ոչինչ,
զեքե այլ գերդ զինք կորի համարի:
Ի վերջո հեղինակը որակում է նրանց որ-
պէս կենդանի դիակներ, որ մարմնով ապ-
րում են, բայց արթուն հոգի ու միտք չու-
նեն: Ապա ողբում է սրա հետեւանքով երկ-
րում ստեղծված անմխիթար վիճակը՝ եզ-
րակացնելով.

Ի մէջ ծովուս ծղփիւնը,
ոչ ան ունիւնք, ոչ նաւավար:

Տառեգուն իր վիճակը նմանեցնում է ա-
նեզր ու անկախճան ծովի խավար ալիք-
ների մեջ ընկածի, որ միշտ անհասկա-
տ է ու երերում, եւ հուսահատվում է՝ ոչ մի օգ-
նական, ոչ մի մտերիմ կամ մխիթարիչ
չգտնելով: Նա ուզում է իմանալ՝ ինչու են
իրեն այդչափ ատում, երբ ինքը միայն բա-
րին է կամենում: Սրտի խոր ցավով ու կս-
կիծով նա բացակայում է.

Չայս ի յո՛վ հարցուկ լինիմ, որ ինձ

խըրատ տար կամ կար,

Թե՛ զիս է՛ր աշխարիս ամեն հանձ կու

ատեն թշնամաբար:

Երկարատեւ, ծանր պայքարի մեջ Երզն-
կացին կարծես ուժասպառվում է, մենակ
ու անօգնական զգում է, առանց արտա-
քուստ ցույց տալու, ներքին վախ ու տագ-
նապ ապրում: Նա ծածկու, թվում է, ինչն
իրեն խոստովանում է իր թույլ եւ անուժ
լինելը՝ տանելու պատերազմը, կրելու թշ-
նամու բազմաթիվ ու բազմատեսակ հար-
ձակումները, սակայն արտաքուստ ամուր
ու անառիկ երեսալով՝ է՛լ ավելի ուժեղ
հարվածներ է ենթարկվում.

Եւ հողէ պարիսպ ածել

ու բերդ ամուր անուն հանել,

**ԵՐԻՍՏՈՆՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրտսական, մշակութային,
լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Երիտունյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Մարմարյան

Գրական կապակցական՝ 624
խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghnikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 2.3.2017 թ.

Տպագրանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ